

Վերջին «րևայ» բառը Անգիտաց Անպետին աւարտման թուականն է՝ այսինքն $30 + 200 + 400 + 1 + 300 = 931$ ($+ 551 = 1482$):

Ձեռագիրս բաց ի իւր ընդոծին կարևորութենէն՝ կը ներկայացնէ և այն շահեկանութիւնը, զի կ'ուսուցանէ մեզ ՄԱՏԹԵՈՍ անուն բժիշկ մը, 18րդ դարու առաջին կէսին ապրած, որ ինքն ալ ունի այս Ձեռագրին մէջ այլևայլ յաւելումներ, մասնաւորապէս Հիպոկրատէ փոխ առնուած և զլիսաւորաբար նուիրուած, հիւսանդի մը ապրելու և չապրելու նշաններուն: Մատթէոս բժիշկ անծանօթ էր ցարդ. ցաւալի է սակայն որ իր մասին չկան կենսագրական տեղեկութիւններ:

Տօբթ. ՎԱՐԱՐ 8. ԹՈՐՈՍԵԱՆ

Վեհետիկ — Մ. Ղազար
20 Դեկտեմբեր 1922

(Շարունակելի)

ՄԱՐԱՆԻ ԶԱՆՈՐԻՆԱԿԱԿԱՆ ԳԱՆՈՐԸ

(Անգիտութիւն - Պարտական աստիճաններով)

I.

Ե Կ Կ Ի Խ Ո Ս Ս Ք

Պարսկաստանի նարաւային սահմանում, Սպանի նահանգից 20 ֆարսախ հեռու, Չահարմանը գաւառի բարձրաբերձ սարերի և լայնամասշտաբ գաւտերի կրճէին, փուսած են տասնչորս հաշարակ զիւղեր, որոնց ընտելեւոր բնիկներն են այն մեծ զաղթականութեան՝ որ կատարեց ժիւրդ գարուն, Շահ-Աբքասի ձեռնով: Հարստանաւորած, տանջուած և կծկաւ մի բռնուն հայ զիւղացիներ են դրանք, որոնք երեք դարերից վեր կենտրոնացել են պարսկական նորիզոնի ներքոյ և կերպի իրենց համար մի նոր կեանք և նոր պատմութիւն:

Հետաքրքրական մի պատկեր է ներկայացնում պատմական այդ ժողովրդի կեանքը իր ուրոյն կենցաղով, իր պատմութեամբ և քանդակութեամբ:

Այդ կեանքը սակայն, տարաբախտաբար, մինչև օրս չէր անծանօթ է ձեռքի մեր ազգագրական պատմու-

թեան, Մեր բանահաւանքներն ուսումնասիրութեան առարկայ չեն գարձել նրա կենցաղն ու սովորութիւնները, նիստ ու կացը, վարք ու բարքը, բանահաւանքները և այլն, որոնք օրրասօրէ մաշուում, հալուում և զոհ են դնում ժամանակի կլանող ժանիքներին: Պէտք էր նրանց փրկել կորստից: Ան ալը նպաստակով 1921 թւին Նոր-Ջուղայից հանապարհեթեյն զէպի Չահարմանը, Մեկ-Նեխի Պարսկա-Հնդկաստանի թեմի առաջնորդ Սահակ Արք-եպիսկոպոս Սպանաւոր տեղե մեզ հետեւեալ նամակը.

Արք-Եպիսկոպոսարան հայոց
Պարսկա - հնդկաստանի

N^o 46թ.

Նոր-Ջուղա 31 Յուլիս 1920

Արժանապատիւ Գործակալներին և Քահանայներին
Բարեպաշտ Երեցփոխ-Բէիսմերին ողջոյմ և
օրհնութիւն.

Ենտ ողջունիս յայտնեմք սիրելութեանցդ, որ տեղույս Ազգ. երկսնո զպրոցների ուսուցիչ Պր. Արամ Երեմեանը Ձեր քարմահալ գաւառը այցելութեան է գալիս շրջազայիլու և գաւառիդ տեղագրութիւնը պատրաստելու, Ուստի սովաւ պատուիրմք Ձեզ թղիւրիդ, որ զեմքը սիրով ընդունիք և յազգելով պէտք եղած աշակցութիւնը իրամ տալ չզլանաք, որոյ վասմ ամենցունով օրհնելով, մամմ աղօթարար

զասկա - Հնդկաստանի Ռայոց առաջնորդ
Սահակ Արք - եպիս. Այվատեան

Շրջեցիկը գաւառի տասնչորս հաշարակ զիւղերը: Շահարմանով ազգեցիկը զիւղացիների մէջ. Ժանօթութեանը նրանց կեանքի գաւառ հանգամանքներ, նրանց պատմութեան և բանահաւանքի հետ: Իս այդ ամէնն արձանագրեցիկը իրենց իսկական զրչեքով:

Մեր ուսումնասիրութիւնը կատարել ենք անձամբ, Մեզ ընկերակցել և աշակցել են բնիկ Չահարմանացի և մեր աշակերտ կարաստ Մաստուրեանը և զիւղի զաղափարական քանաններից Տէր-Արամ Անգրէսեանը: Երկուսն էլ մեզ հետ շրջել են զիւղից զիւղ և աւել մի շարք ծանօթութիւններ:

Ժողովրդի բանահաւանքից հաւաքել ենք զհեղինակները բերաններից, իսկ ազգագրական - պատմական տեղեկութիւններն ու ծանօթութիւնները քաղել ենք ժողովրդից, զխաւրարակա զիւղական պաղպիկներից և մամիներից և «գաւառագիտութիւններից»: Մեզ աղբիւր Ժաւաքել է նաև Սիրուք զիւղացի Սամել Ղարախանեանը, 90 տարեկան մի ծերունի է նա, որ իր մաքրող կեանքը անց է կացրել Չահարմանում: Դա տեղի է խմանում, ողջ գաւառի զիւղերի, սարերի, ձորերի, ազ-

քրիւներէն անունները և նրանց շուրջ պատմութիւնը հետաքրքրական աւանդութիւններ: Գիւղացիները կոչուած են նրան « Չանարմանալի անգիր մասնաւոր »: Թէ՛ յիշեալ ազնիւ ծերունուն, թէ՛ Արշաւ քնյ: Անբռնասիրտին ու կայապետ Մանաստեանին և թէ՛ դիպիրի գաղափարական երիտասարդներին յայտնում ենք մեր խորին և անկեղծ շնորհակալութիւնները, իրենց սիրալիք ընդունելութեան համար:

Մեր այս աշխատութիւնը Չանարմանալ գաւառի հայ գիւղացիութեան ներկածած ամենաառաջին ուսումնասիրութիւնն է, որի մէ մասը, այն է ժողովրդական գրա-կատութիւնը լոյս ընծայելից վիճինայի « ԼԱՆԴԷՍ ԱՄՍՏՐԱՅԱ »-ի մէջ, 1922 թին, « Չանարմանալի ժողովրդական բանահիւտերին » խորագրով: Իսկ ազգա-գրական-պատմական մասը թուում է մեզ մոտ ձեռագիր: Այս աչք անտիպ աշխատութիւնն է, որ լոյս ենք ըն-ծալում « ԱԼԱՅԱՎԻՊ »-ի մէջ: Ս. Կարի:

Ա.

Ներածութիւն. — Սահմաններ. — Բնական կազմութիւնը. — Լեռները. — Զբոս. — Հանքային ջրերն ու հանքերը. — Կլիման. — Բուսականութիւնը. — Պաշտօն ծառերը. — Վայրի ծառերը. — Թփերը. — Վայրի ծաղիկները. — Անասնները. — Մարգագիտները. — Հահիւ-ները. — Կենդանիները և թռչունները. — Առ-դունները և միջատները:

Ներածութիւն. — Չանարմանալը համարում է Պարսկաստանի Սպահան նահանգի և Պարսկա-Նոդկաստանի թեմի հայաշատ և կարեւոր գաւառներից մէկը, որ ընկնում է Պարսկաստանի հարաւորին կողմը, Սպահանից (նոր-Ջուղայից) մօտաւորապէս 20 ֆարսախ հեռու, մի ընդարձակ տարածութեան վրայ, որի երկարութիւնն է տասներկու ֆարսախ, իսկ լայնութիւնը՝ հինգ:

Ամբողջ գաւառն ստորաբաժանում է չորս մասաներից. — ա) ֆարազօմբայի մասալ, որի մէջ է գտնուում հայաբնակ Դէշէի գիւղը: Բ) Գեւոնգումանի մասալ, ուր հայերը բնակուած են Մամուլան, Լիվասան, Դեքթին-Քոնալք, Վե-րին-Քոնալք, Մուշիգան, Շահբուլաղ, Սինազան, Աղբուլաղ, Մամուլա և Հաշիբալք հայաբնակ գիւղերում: Գ) Միգաի մասալ, որ իր մէջ է պարունակում հայաբնակ Բալըիլու գիւղը և Դ) Դէ-թորդի մասալ, որի մէջ են Ահմադաբաղ և Սիրաք գիւղերը: Այս բաժանումից էլ առաջ է եկել

գաւառի անունը: Դահաբ պարսկերէն նշանակում է չորս, իսկ մահալ՝ գաւառ, շրջան, ուրեմ Չանարմանալ (Չարմանալ) նշանակում է չորս շրջան:

Սահմանները. — Չանարմանալի սահմաններն են կազմում արևելքից՝ Ճարսի գաւառը, արևմուտքից՝ Փէրիա, Ռիսիսից՝ Լնջան, հա-րաւից՝ Դոնստան (Փօշաղու):

Բնական կազմութիւնը. — Գաւառն իր քնա-կան կազմութեամբ ներկայացնում է գեղեցիկ մի պանօրամա. ձեր աչքերի առաջ բացւում են բարձրաբերձ և ապառաժոտ լեռներ, վիթխարի լեռնաշղթաներ ու լեռնահովիտներ, անթիւ ու անհամար սրածայր ու մերկ ժայռեր, խորտակ-բորտ և լերկ ապառաժներ, բլուրներ, ահագին սա-րաւանդներ, հսկայ բարձրաւանդակներ, անդրն-դախոր ձորեր ու լոխի քարտնձաններ, երկար ու ձիգ հովիտներ, ընդարձակ դաշտեր ու տա-փաստաններ, լայնատարած սիգաւէտ արօտներ ու շամբեր, որոնք փուած են զանազան ուղղու-թեամբ:

Սարերի լանջերից և ստորոտներից բխում են բազմաթիւ սառնորակ և առուաբաղ մզիտ աղբիւրներ, հովիտներով հոսում են յորգաւոտ վտակներ և առուներ. իսկ զարնան սարերը, բլուրները, հովիտներն ու ձորերը ծածկուած են կանաչ խոտերով և զոյնզոյն ծաղիկներով: Այս բոլորը գաւառին տալիս են առանձին մի փայլ և գեղեցկութիւն:

Լեռները. — Չանարմանալում փուած են զանազան ուղղութեամբ բազմաթիւ լեռներ, ուրոնք կազմում են բազմաթիւ մեծ ու փոքր բարձրաւանդակներ. նրանց իրենց բնական մի-թով և կառուցածքով ներկայացնում են գեթա-ւետական մի-մի գողտրիկ պատկերներ: Ամե-նանշանաւոր, բարձր և սիգաւէտ լեռներն են.

ա) Զոմբինի (աշխարհային). — Սա Չանա-մանալի ամենամեծ և նշանաւոր սարն է, որի մի ոստը ձգւում է դէպի արևմուտք՝ մինչև Զօլակա պարսկաբնակ գիւղը, իսկ միւս ոստը հասնում է դէպի արևելք՝ մինչև Շամսաբաղ: Այս սարի ստորոտից և լանջից բխում են բազ-մաթիւ գոլալ և սառնորակ աղբիւրներ, որոնք տնտեսական տնտակէտից նշանակալից դեր են կատարում: Դրանցից նշանաւորներն են՝ 1) Վախ-տու սար (պարս. նշանակում է ժամանակ և ժամ, սրա շուրջը օրաց որոշ ժամերին բխում է, և որոշ ժամերին՝ չորանում), որ ոռոգում է պարս-կաբնակ Շամսաբաղ գիւղի դաշտերը, 2) Խնգը սվար, 3) Զէշմա հասան, 4) Զէշմա լոտի, որ ոռոգում է հայաբնակ Սիրաք գիւղի դաշտերը,

1. Հայ գիւղերի մօտ են գտնուած պարսիկների գիւ-ղերը, որոնք բոլորն էլ մահմեդական են:

5) փաթաթիթ, 6) Զէշմա ում-ոււմ, 7) Զէշմա զանա, որ երեք ջրաղաչափ ջուր ունի և ոռոգում է պարսկաբնակ Շովշիզան (Հաւշուն, բաղկացած է 2000 տնից) գիւղի դաշտերը, 8) Զէշմա քոմազար, 9) Զէշմա դարաբիդ, 10) Զէշմա օվբարիք և ուրիշ 16 մանր աղբիւրներ: Սարը հարուստ է ծաղիկներով և բոյսերով: Գարնան հոգիներն իրենց հօտերով բարձրանում են այս սարը և ֆուռ վեց ամիս՝ ապրիլից մինչև Սեպտեմբեր: Սարը ծածկած է մշտական ձիւնով:

բ) փկալայրի սար. — Զօմբիկից յետոյ Զահարմաշի երկրորդ և նշանաւոր սարն է, որ բաւական ընդարձակ տարածութիւն է բռնում. մի ոտան սկսում է հիւսիս-արևելեան կողմից, Սօզուր սարից և երկարաձգում է դէպ ի հարաւ — արևմուտք, մինչև Զըրափօտ:

Սարը ներկայացնում է այսպիսի մի հմայիչ պատկեր. զազաթը, տեղ-տեղ, ծածկած է յաւերժական ձիւնով, որի մի մասը հալելով՝ կազմում է, զազաթի վրայ, մի փոքրիկ լիճ: Սարի հարաւ — արևմտեան կողմը ծածկած է խիտ անտառով, ուր կան բազմաթիւ վայրի ծառեր, որոնցից ամենանշանաւորն է Աբօլի ծառը, որի փայտը չափազանց դիմացկուն է և պինդ. իսկ հիւսիս — արևելեան կողմի լանջերից և ստորոտներից բոխում են բազմաթիւ սառնուրակ և վճիտ աղբիւրներ, որոնցից իւրաքանչիւրն ոռոգում է մի փոքրիկ հող: Լանջերի աղբիւրներն են՝ 1) Գելլըսպիդ (ճերմակ հող), 2) Զօլ աղբիւր (երկար աղբիւր), 3) Զարդի աղբիւր (լեռան աղբիւր), 4) Զուռու աղբիւր, 5) Գնաքսանի աղբիւր, 6) Զէշմա Ջաբբառ, 7) Զէշմա նազար, 8) Հաթ չէշմա (եթնաղբիւր). ստորոտի աղբիւրներն են՝ 1) Բիդաքի աղբիւր, որ ոռոգում է Վերին-Փօսալքի արտերը, 2) Շահբուլաղի աղբիւրները, որոնք ոռոգում են Շահբուլաղի, Կոր ֆօսալքի և Կասիրաբաղի արտերը, 3) Կաթնով աղբիւր և 4) Գօլբրի աղբիւրներ, որոնք ոռոգում են Լիվասեան գիւղի Գօլիառու կղււթ հողը, 5) Եկեղեցու աղբիւր, 6) Կաւահանքի աղբիւր, որ ոռոգում է պարսկաբնակ ֆաթթաք գիւղի արտերը և այլ մանր-մուշր աղբիւրներ, որոնք ոլոր-մոլոր հոսելով՝ կազմում են մի հսկայ ճահիճ, որ կոչւում է Գեանդումանի ջամբ, որի մէջ բնտու են 2—3 զազ բարձրութեամբ եղէգներ և խոտեր: Այս սարը ծածկած է տեսակ-տեսակ խոտերով և ծաղիկներով, որոնց սերմերից և արմատներից գիւղացիները անարատնում են զանազան տեսակ դեղեր, օր. հաւաժիւս, որի արմատից չինուի են մահլամ. գնուօվա, որի խոտից սկրաքաւի զեղ են պատրաստում: Այս

սարից ստանում են նաև զազ և կաւ: Վերջինցս գիւղացիները պատրաստում են թոնիր, կնուճ, կուժ, փարշ, և այլն:

գ) Սօզուր սար. — Սա մի երկար լեռնաշղթայ է, որ սկսում է Շիրիքանի ձորից և ձգւում է մինչև Բազզըռան սարը, որի լանջերից բոխում են բազմաթիւ սառնորակ և վճիտ աղբիւրներ, որոնք միմեանց միանալով՝ կազմում են Սօզուր գետաւը, որ օժապտոյտ հոսելով՝ թափւում է Գօֆօհունի գետը: Սարի զազաթը տեղ տեղ ծածկած է յաւերժական ձիւնով: Սարը հարուստ է նաև երփներանգ ծաղիկներով և սունկ ու պոստով:

դ) Մահար դօխտար. — Սա մի ոտան սկսում է արևելեան կողմից՝ Բիդը Դաթարից և ձգւում է դէպի արևմուտք՝ մինչև Գեանդումանի պարսկաբնակ գիւղը: Այս սարի ստորոտից բոխում է երկու ջրաղաչափ ջուր ունեցող մի մեծ աղբիւր, որի մէջ կան անուշահամ ձկներ: Աղբիւր ջուրը ոլոր-մոլոր պտոյտներով ոռոգում է Գեանդումանի պարսկաբնակ գիւղի արտերը: Աղբիւր մօտ, մի բարձր քարաշէնի վրայ, գտնւում է մի ուխտատեղի, որ կոչւում է Մահար-դօխտար՝ մայր և աղջիկ, որից է ստացել սարն իր անունը: Ըստ աւանդութեան՝ Ավդանները յարձակւում են Գեանդումանի վրայ. բնակիչները փախչում են, ճանապարհին ֆուռ և են մի մայր ու աղջիկ: Երբ ավդանական զօրքը մօտենում է նրանց՝ մայրը ծնրադիր և արտասուլից խնդրում է Աստուց, որ գետինը պատռէ և իրենց ներս առնէ: Աստուճ լուռ է մօր աղբիւրանքը և նրանք մտնում են գետնի մէջ: Բայց նրանց մագերի մի փուռը ֆուռ է դրսում, որ ժամանակի ընթացքում կանաչելով խոտ է դառնում: Այժմ այդտեղ չինւած է աղբիւր մի սենեակ, որ զարդանք է պարսկական ճաշակով՝ ուլունքներով, բոժոժներով և մետաքսե թաշկինակներով: Հայերն ու պարսիկներն ուխտի են գնում այնտեղ, մոմ վառում և մատաղ կարում: Մահար-դօխտարի մօտ չինւած է նաև մի ուրիշ սենեակ, ուր թաղւած են Գեանդումանի խաները:

Երկրորդական սարերը. — Բաց ի յիշեալ սարերից՝ նշանաւոր են նաև հետեւեալ երկրորդական սարերը. — 1) Գուդուլու սար, որ խոտաւէտ մի սար է, որից օգտւում են մօտակայ

1. Տարիներ առաջ այս գիւղը հայաբնակ է եղել. այժմ այնտեղ Գեանդումանի տապանաքարեր, որոնց անցնելով լեռն վայրեր են:

գիւղերի գիւղացիները և վրանաբնակները, որոնք ուղիղ երեք ամիս, Ապրիլ, Մայիս և Յունիս, իրենց հօտերով բնակուում են: Այս սարից տաղաւուս է նաև գազ. 2) Ահաղեքարի սար, որ նոյն պէս հարուստ է բուսականութեամբ և պծնազարդած է անուշահամ և զուլալ աղբիւրներով:

Ջրերը. — Չահարմահալը հարուստ է աղբիւրներով, որոնց ջուրը սառնորակ է, զուլալ և քաղցրահամ: Մեծ աղբիւրներից նշանաւորներն են. — 1) Ձէշմա գանա. սա բոլորում է Զօմբինի սարից և երեք շրաղաց ջուր ունի, որն ոռոգում է հովիտը (հաւշնուն) պարսկաբնակ գիւղի արտերը. 2) Մադար-գոնտարի աղբիւր, որ յայտնի է իր համեղ ձկնիկով. 3) Բիզաքի աղբիւր, որի ջուրն ոռոգում է վերին-Քօնարքի արտերը. 4) վախթուսաթ, որի ջուրը յանկարծ բոլորում է մօտ Երկու շրաղացի և յանկարծ չորանում: Այս աղբիւր ջուրն ոռոգում է Շամսաբադի դաշտերը:

Բաց ի այս նշանաւոր աղբիւրներից՝ Չահարմահալում կան նաև բազմաթիւ առական, առուներ, վտակներ, որոնք գոյանում են անձրևի և հալած ձիւնի ջրերից և խոնոշալով ցած են վազում լեռների լանջերով: Կան նաև բազմաթիւ ջրմուկներ (քանարիքներ) և գետակներ:

Գետակներից ամենանշանաւորներն են.

1) Բօղապառ գետակ. — Այս Չահարմահալի ամենանշանաւոր գետակն է, որ սկիզբ է առնում Զղաթօթի դաշտում բլրիտղ բազմաթիւ աղբիւրներից և ուղարպտոյտ հոսելով դէպ ի արևելք, անցնում է պարսկաբնակ Բօղալի և հայաբնակ Աղբալաղ ու Սինաթան գիւղերի մօտից և իշնում Գեանդուժանի շամբը: Ապա այստեղից հանդարտ ու դանդաղ յորդելով՝ անցնում է Նոր-Քօնարքի հիւսիսային կողմը (Վ. մզոն հեռու), յետոյ Նոր-Քօնարքից երեսը թեքելով դէպ ի հարաւ, անցնում է վերին-Քօնարքի արևելեան կողմը (1500 քայլ հեռաւորութեան վրայ), այդտեղից 4-5 մղոն եւս հոսելով դէպ ի արևելք, օժապտոյտ անցնում է դէպ ի Փաշտօ, ապա պտոյտներ գործելով շուտ է գալիս դէպ ի արևմուտք և հետգնած իր մէջ բազմաթիւ աղբիւրներ ընդունելով՝ ուրը-մուրը գալարումներով անցնում է Նասէրի և Թափուս Պարսից ծոցը: Գետակը յայտնի է իր համեղ ձկնիկով:

2) Դիզգագի գետակ. — Չահարմահալի երկրորդ նշանաւոր գետակն է, որ սկիզբն է առնում Նաղնա պարսկաբնակ գիւղի մօտից և ոռոգում է նոյն գիւղի արտերը, ապա ուղարպտոյտ հոսելով դէպ ի արևմուտք, անցնում է Արջանի տեղ գտնուում են 10-12 գազ երկայնութեամբ

Այդտեղ իր մէջ բազմաթիւ աղբիւրներ ընդունելով՝ ոռոգում է յիշեալ գիւղացաղաքի արտերն ու դաշտերը: Գետոյ իր ընթացքը շարունակելով դէպ ի Փարազօմբա պարսիկ գիւղը, ջուր է մատակարարում այնտեղի արտերին: Այնուհետև Դէշնով, Սուլա, Դասկէրդ, Կիզազ, Գալաշէրի, Գիշնիզա, Սաթի յանկարծ պարսկաբնակ գիւղերի մօտից օժապտոյտ հոսելով՝ գնում, Թափուս է Դէշօրդի (Դէքուրդու) գետակը:

3) Դիւքօրդու գետակ. — Չահարմահալի անհանգիստ գետակներից մէկն է սա, որ սկիզբ է առնում Լաղզօմբի դաշտում բլրիտղ բազմաթիւ աղբիւրներից և ակերից. նրանք միանալով միմեանց հետ կազմում են յիշեալ գետակը, որ սկսում է իր ընթացքը հիւսիսից արևմուտք ուղղութեամբ, ապա թեքում է դէպ ի հարաւ — արևելք և օժապտոյտ անցնելով Զալլուժուր, վերին-Չանիան, Զածի-Չանիան, Դէշօրդ, Թաղանակ, Շամսաբադ, Խարաշի, Թիշնիզ, Բաղլու գիւղերի մօտից, թեքում է դէպ ի արևմուտք ու միանում է Կիզազ գետակի հետ. այս միաւորութիւնից յետոյ նա աւելի մեծանում և ստանում է մի մեծ գետակի կերպարանք: Այնուհետև մտնում է լեռների միջև և դառնում լեռնային աղմկալոյզ մի գետակ, որ մի շարք արգելքների ու խոլընդոտների դէմ կռւելով՝ փրփրած վազում է դէպ ի հարաւ և հետզհետէ ազատւելով լեռներից գնում է մինչև Մաշէդ-Սէշման: Այս տեղից էլ հանդարտ չափելով Մաշէդ-Սէշմանի դաշտը, գնում Թափուս է Պարսից ծոցը: Այս գետակը նոյնպէս հարուստ է համեղ և անուշահամ ձկնիկով:

Այս այսպիսի պատկերներն են ներկայացնում Չահարմահալի յիշեալ երեք գետակները, որոնք տնտեսական տեսակէտից առաջնակից ծառայութիւն են մատուցանում գաւառին:

Հանքային ջրերն ու հանքերը. — Չահարմահալը միանգամայն զուրկ է հանքային ջրերից. իսկ հանքերի տեսակէտից կարելի է ասել, որ գաւառը բաւական հարուստ է քարածուխի, պղնձի, երկաթի, նաթի և այլ հանքերով, որոնք սակայն, տարաբախտաբար դեռ ուսումնասիրւած չեն, անմշակ ընկած են գետնի տակ և որ և է օգուտ չեն տալիս գիւղացիներին:

Չահարմահալի շահագործուող հանքերի մէջ աջքն են ընկնում աղահանքերը, որոնք մագուր և սպիտակ աղ են, ալտադուրում: Աղահանքերից յետոյ նշանաւոր են քարահանքերը, որոնց արտադրութիւնը ընկնում իրենց կարծր, խիւղացուն և բարձր յատկութիւններով: Այս տեղ գտնուում են 10-12 գազ երկայնութեամբ

փարեր, որոնք շինութեանց համար շատ յարմար են: Նշանակուող են նաև կաւի հանքերը, քեւալարու հիւսիսային ստորոտից ստացուում է ընտիր կաւ, իսկ Սօվզուց և Սարլբերից՝ քեւջ:

Ելիման. — Չահարամահալն իր բարձր և լեռնային դիրքի շնորհիւ առողջարար և բարեխառն կլիմա ունի, որի հետևանքով էլ բնակիչները շատ առողջ են: Այս տեղ ձմեռը դաժան է և խստաշունչ. փշում է բուռ ու բորան և սկսում են սառնամանիքներ, և երբեմն այնպիսի սաստիկ ցուրտ է անում՝ որ սառնութեան աստիճանը բարձրանում է 30ի և մինչև իսկ 34 սաստիճանի:

Բնդհանրապէս ձմեռն սկսում է հոկտեմբեր 15ից և տևում մինչև մարտ: Այդ ժամանակաւ միջոցում առատ ձիւն է գալիս և ամբողջ գաւառը ծածկում է ձիւնի հաստ սաւանով և գրեթէ չորս ամիս շարունակ հաղորդակցութիւնը կտրուում է Չահարամահալից դէպ ի Սպահան, Նուր-Ջուղա և այլ տեղեր, որովհետև ճանապարհորդութիւնը դառնում է վտանգաւոր: Շատ անգամ անփորձ ճանապարհորդները ցըրտամահ են լինում: Ձմեռը սաստիկ է, նա մանաւանդ այն գիւղերում՝ որոնք ընկած են սարերի մօտ, ինչպէս Դէյլէն, Մամուքա, Մուշիգան, Սինգան, Սիրաք, և այլն: Այս գիւղերի կլիման սարերի խիստ ազդեցութեան է ենթարկուում: Սարերից փշում են քամիներ, որոնք իրենց հետ առատ ձիւնի հիւսիս են ցած բերում և գիւղերը ծածկում 1-2 մեղր բարձրութեան ձիւնով, որի պատճառով գիւղացիներն իրենց երթևեկութիւնը կատարում են տան կտուրների վրայով: Մարտի սկիզբներին եղանակը մեղմանում է և սկսում է կանաչ գարունը, որ տևում է մինչև յուլիսի 10ը: Գարնան եղանակը զով է և անոյշ, բայց երբեմն գիշերները այնպիսի ցուրտ է անում՝ որ գիւղացիները շատ անգամ քնում են քուրսիների տակ: Սակայն շնայելով գիշերային այդ ցրտին՝ հովիւներն իրենց հօտերով բարձրանում են սաւերը և ծնում 4-5 ամիս: Ամառը բնդհանրապէս օտթ է, թէև փոխախառն. փշում են հով քամիներ: Բայց շատ անգամ արևմտեան և հիւսիսային ուղղութեամբ փշում են չոր քամիներ և չորացնում հացադոյւսերը: Լինում են տարիներ բոլորովին երաշտ, օր. 1916 թիւն: Ամառն սկսում է Յուլիսի 10ից և տևում է մինչև Սեպտեմբերի 10ը: Ամառից յետոյ վրայ է գալիս կարճատև աշունը, որ սկսում է Սեպտ. 10ից և տևում է մինչև Հոկտեմբեր 15ը:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

(Շարունակելի)

ՀՆԱԽՈՍԱԿԱՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

ՀԻՆ ՀԱՅՈՑ ՔՈՎ

(Շար. տես Բազմ. էջ 178)

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

Կը բարդուի և ըստ բազում գլխոց աւելի հետաքրքրական կը դառնայ հոս մեր բնութեան նիւթը: Մեր նախնիք կուտային իրենց զաւակաց մտաւոր սնունդը, ինչ եղանակաւ և ինչ չափով. հարցումներ՝ որոց հարկ է ինձ պատասխանել: Պէտք է կանխեմ՝ դիտել տալ՝ թէ ուսումնական դաստիարակութեան վիճակը մեր ազգի մէջ՝ շատ թերի և խառնակ եղած է սովորաբար: Չենք կրնար երեակայիւ մեր մէջ զոյգութիւնը, կամ գէթ հաւասար չափով ու տեղութեամբ, հանրային մտաւոր մշակութեան նպաստող այն ազդեցիկ մշտնջերուն, որոցմով ճոխացած էին, և որոց արդիւններով կը հպարտանային Յունաստան, Հռոմը, Բիւզանդիոն և ուրիշ ծաղկեալ քաղաքներ: Ինչ ունէինք մեք ուրեմն նոյն նպատակին յարմար: Տեսնե՞ք որքան մեր պատմութեան լոյսը ցոյց կուտայ մեզ:

Ա. — ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Կ'ուզեմ առանձին նայիլ ասոր, որովհետեւ շատ զգալի է խտրը՝ որ կայ մեր ըզով Աւետարանին նախընթաց ու հետեւորդ շրջաններու մէջ: Մտաւոր ինչ շարժում, ինչ մշակոյթ կամ ինչ դպրոցական գործունէութիւն ունեցել է դիցապաշտ և անգիր Հայաստանը, որ պարծեր է միշտ իւր քաղաքակրթութեամբ: Մատախուղ մը, թանձր մատախուղ մը կը ծածկէ մեր աչքերէն՝ ինչ որ կը բաղձանք տեսնել: Մեր խորհնացի պատմահայրը, որ կը ստիպուի նոյն ժամանակաշրջանի ետեւ որոնել Հայոց